ՀԱՅՏ

**Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների**

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Գյուլագարակ համայնքի Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ բնակավայրերի համայնքային ճանապարհների ասֆալտապատում |
| Մարզ | Լոռի |
| Համայնքը /համայնքները | Կուրթան, Վարդաբլուր, Գյուլագարակ, Գարգառ, |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | Երևանից 150 կմ, մարզկենտրոնից 30 կմ |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | 8951 մարդ |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի | Կիրառելի չէ |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝<br><br>- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը,<br><br>- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,<br><br>- ոռոգման համակարգից | Համայնքի 7 բնակավայրերում ջրամատակարարումը 24 ժամյա է: Գարգառ, Պուշկինո և Ամրակից գյուղերի ջրամատակարարումը համայնքային է և երբեմն ջուրը չի հերիքում: Ջրահեռացման հատուկ կենտրոնացված համակարգ ոչ մի բնակավայրում չի գործում:<br><br>Գազաֆիկացման մասնակի խնդիր կա Գյուլագարակ, Պուշկինո և Ամրակից բնակավայրերում: Մնացած բնակավայրերը գազաֆիկացված են 100%-ով: |

| | |
|---|---|
| **օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,**<br><br>**- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ** | *Համայնքում առայժմ ոռոգվող հողեր չկան:*<br><br>*Լուսավորված են համայնքի փողոցների 45-50%-ը: Տեղադրված լուսատուների 90%-ը ԼԵԴ են:* |
| **Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը** | *Գյուլագարակ համայնքը կազմված է բացառապես գյուղական բնակավայրերից և ճանապարհներն էլ բնորոշ են գյուղական ճանապարհներին՝ քարքարոտ և անհարթ: Այդ ճանապարհների մեջ կան առաջնային նշանակության ճանապարհներ, որոնք ամենաբանուկն են և դեպի դպրոց, մանկապարտեզ, եկեղեցի, գերեզմանատուն տանող ճանապարհներն են: Անձրևի ժամանակ երեխաների համար մեծ խնդիր է ցեխոտ և ջրափոսերի պատճառով անանցանելի ճանապարհներով գնալ դպրոց, մանկապարտեզ: Մասնակի ասֆալտապատումների միջոցով տարիների ընթացքում հնարավոր է հասնել ցանկալի վերջնարդյունքի և ունենալ համայնքային բարեկարգ ճանապարհներ:* |
| **Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին** | *Գյուլագարակ համայնքը տուրիստական ակտիվ գոտի է և համայնքի ռազմավարական զարգացման սկզբունքներից է այն ավելի ճանաչելի և պահանջված դարձնելը: Օրինակ 2019թ-ին Սոճուտ դենդրոպարկի ճանապարհի ասֆալտապատմամբ գյուղ այցելող զբոսաշրջիկների թիվը կրկնապատկվեց, իսկ վերանորոգված ճանապարհին հարող տների գինը թանկացավ: Նույն էֆեկտը պիտի ունենա նաև 2020 թվականի ասֆալտապատման աշխատանքը: Ծրագրի իրականացմամբ համայնքի բնակչության կենսաձևը որոշակիորեն կդառնա ավելի հարմարավետ, կբարձրանա կյանքի որակը, վստահությունը համայնքի նկատմամբ և գյուղում մնալու ցանկությունը: Տարեցտարի կապիտալ ասֆալտապատման աշխատանքների իրականացմամբ կհասնենք վերջնական սպասելի արդյունքի և կունենանք մեր երազած բարեկարգ* |

| | |
|---|---|
| | *համայնքը:* |
| **Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները** | *Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է*<br><br>1. *Կնքել պայմանագիր և կատարել նախագծանախահաշվային աշխատանքները:*<br>2. *Հայտարարել աշխատանքների կատարման մրցույթ և հաղթող ընկերության հետ կնքել պայմանագիր*<br>3. *Իրականացնել աշխատանքները՝ ըստ նախագծի*<br>4. *Իրականացնել մշտադիտարկում*<br>5. *Կնքել պայմանագիր, իրականացնել տեխնիկական հսկողություն*<br>6. *Իրականացնել ընթացիկ սպասարկումը*<br><br>*Ծրագրի ընդհանուր արժեքն է 58434382 ՀՀ դրամ:*<br>*Ծրագրի մեկնարկը կտրվի 2020 թ-ի 1-ին եռամսյակին և կավարտվի 2020թ-ի դեկտեմբերի 15-ին:*<br>*Կասֆալտապատվի 1124 գծամետր ճանապարհ:* |
| **Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի** | *Ճանապարհները, որոնք պիտի ասֆալտապատվեն համայնքային նշանակության ճանապարհներ են և համայնքի անօտարելի սեփականությունն են: Կատարվելիք ծախսերը կապիտալ բնույթի են: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի հիմնական միջոցների արժեքը կավելանա ծրագրին համարժեք:* |
| **Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա** | *Ծրագրի ուղղակի շահառուներն են Գյուլագարակ համայնքի բոլոր բնակիչները և այցելուները:*<br><br>*Ծրագրի իրականացման արդյունքում կավելանա բնակիչների կենցաղային հարմարավետությունը, փողոցները կլինին հարմար քայլելու և երթևեկելու համար, չեն լինի փոշոտ: Այդ ճանապարհով հաճախ* |

| | |
|---|---|
| | երթևեկող մեքենաները ավելի երկարակյաց կլինեն և ավելի ուշ վերանորոգման կարիք կունենան: Հարակից տները կարժեվորվեն:<br><br>Ճանապարհները, որոնք պիտի ասֆալտապատվեն առաջնային նշանակության ճանապարհներ են. դպրոցներ, մանկապարտեզներ տանող ճանապարհներն են: |
| **Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը** | Ծրագրի իրականացմամբ հիմնական աշխատատեղեր չեն ստեղծվի, սակայն ժամանակավոր աշխատանքով կապահովվեն 30-40 հոգի, ովքեր իրականացնելու են ասֆալտապատման մասնագիտական և բանվորական աշխատանքները: |
| **Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը** | Նախորդ տարվա բյուջեն՝ 252221.2 հազ. դրամ. |

***(հազար դրամ)***

| | *Պլանը* | *Փաստացին* | *Տոկոսը* |
|---|---|---|---|
| ***Համայնքի բյուջեի մուտքերը*** | 252221.2 | 251472.7 | 99.7 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները*** *այդ թվում՝* | 240128.3 | 239379.9 | 99.7 |
| *-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝* | 234878.3 | 234129.9 | 99.7 |
| *- Սեփական եկամուտներ* | 75047.2 | 74394.8 | 99.1 |
| *-Ֆոնդային բյուջեի մուտքերը* | 26495.7 | 16228.6 | 61.3 |
| *-Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 15517.1 | 5250.0 | 33.8 |
| *-Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը* | 10978.6 | 10978.6 | 100 |
| ***Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,*** *որից՝* | 252221.2 | 213498.6 | 84.6 |
| *- Վարչական բյուջեի* | 235992.6 | 200659.2 | 85.0 |

| | | | |
|---|---|---|---|
| ծախսեր | | | |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 26495.7 | 12839.4 | 48.5 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,** *որից՝* | 36145.7 | 23070.5 | 63.8 |
| - ճանապարհաշինություն | 8467.5 | 2232.0 | 26.4 |
| - ջրամատակարարում | 0.0 | 0.0 | 0.0 |
| - փողոցային լուսավորություն | 3850.0 | 3400.0 | 88.3 |
| - գյուղատնտեսություն | 4328.2 | 4328.2 | 100.0 |
| - աղբահանություն | 1000.0 | 980.0 | 97.8 |
| -ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 18500.0 | 12130.3 | 65.6 |
| -գույքի օտարումից մուտքեր | -9650.0 | -10231.1 | 106.0 |

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

***309739.1 հազ.*** *դրամ.*

| | **Պլանը (հազար դրամ)** |
|---|---|
| **Համայնքի բյուջեի մուտքերը** | ***309739.1*** |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում** *այդ թվում՝* | 271764.9 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, *որից՝* | 271764.9 |
| - սեփական եկամուտներ | 89816.6 |
| -ֆոնդային բյուջեի մուտքերը | 39750.0 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 3118.9 |
| -ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը | 36631.1 |
| **Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր,** *որից՝* | 309739.1 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 273108.0 |
| -Ֆոնդային բյուջեի ծախսեր | 39750.0 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի** | 45250.0 |

| | | |
|---|---|---|
| | ***պլանավորված ծախսերը,*** *որից՝* | |
| | -ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | 8000.0 |
| | -գյուղատնտեսություն | 2300.0 |
| | -ճանապարհներ | 30400.0 |
| | *-աղբահանություն* | 2660.0 |
| | *-փողոցների լուսավորում* | 990.0 |
| | *-մշակույթի տներ, ակումբներ* | 900.0 |
| | *-գույքի օտարումից մուտքեր* | -5500.0 |
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | Համայնքի բյուջեի մուտքերը նաղատեսվել են 309739.1 հազար դրամ, որից դոտացիա՝ 181948.3 հազար դրամ: Բյուջեի միջոցներով նախատեսվել է կատարել հետևյալ ծախսերը՝<br>Աշխատավարձ-70747.2 հազ. դրամ<br>Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում-37883.2 հազ. Դրամ<br>Դրամաշնորհներ-123808.4 հազ. դրամ<br>Սոց. Նպաստներ-8225.0 հազ. դրամ<br>Այլ ծախսեր-29325.3 հազ. դրամ<br>Շենքերի և շինությունների վերանորոգում 29400.0 հազ.դրամ<br>Մեքենաներ և սարքավորումներ- 11560.0 հազ. դրամ<br>Այլ հիմնական միջոցներ-4290.0 հազ. դրամ<br>Վերը նշված բոլոր նախատեսված ծախսերը համայնքի համար համարվում են առաջնային և անհրաժեշտ, ուստի բյուջետային մուտքերի հաշվին նշված ծրագրի ամբողջական իրականացումը անհնարին է: Այդ իսկ պատճառով դիմում ենք սուբվենցիա ստանալու համար: | |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝**<br><br>**- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _975.0 հազ. դրամ,**<br><br>**- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ __400.0__ հազ. դրամ,**<br><br>**- տեխնիկական հսկողության** | *55626.2 հազ. դրամ (100%)* | |

| | |
|---|---|
| ծառայությունների արժեքը՝ _926.5 հազ. դրամ,<br><br>- հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _308.9 հազ դրամ,<br><br>- գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ ___0__ դրամ,<br><br>ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը __0___ դրամ | |
| Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը | *25031.8 հազ. դրամ (45%)* |
| Այլ ներդրողներ | *......0.... դրամ ( ..0. %), նշել ներդրողի անունը:* |
| Ծրագրի իրականացման տևողությունը | *Սկիզբը___15_03_2020թ. Տևողությունը _9 ամիս___* |
| Ծրագրի ծախսերը | *Ծրագրի բյուջեն 55626.2 հազ. դրամ է, որից շինարարական աշխատանքների արժեքը 53015.8 հազ դրամ, շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 975.0 հազ. դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 400.0 հազ. դրամ, տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 926.5 հազ. դրամ, հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 308.9 հազ դրամ:*<br><br>: |
| Ամսաթիվ | *_31__ ___01______2020թ.* |

**Այլ տեղեկություններ ծրագրի մասին** (Նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում)։

**Համայնքի տնտեսական պատասխանատու**
**Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը**
*Վրույր Այվազյան +37493 93 04 26 vruyr.ayvazyan04@gmail.com*

—

Համայնքի ղեկավար ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ
(անունը, ազգանունը)

Կ. Տ.